ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# Ա Ն Գ Լ Ե Ր Ե Ն

## 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ, ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ (ԲԱՆԱՎՈՐ) ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ԵՐԵՎԱՆ 2013

Պատասխանատու՝ ԼՈՒՍԻՆԵ ԱԹՈՅԱՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնը շնորհակալություն է հայտնում ՀՀ բուհերի անգլերենի ամբիոններին, ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին, ուսուցիչներին և բոլոր շահագրգիռ անձանց՝ ուղեցույցի նախագծի վերաբերյալ հայտնած կարծիքների, ներկայացրած առաջարկությունների և դիտողությունների համար, որոնք հաշվի են առնվել ուղեցույցի սույն տարբերակում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան ..........................................................................4
2. Թեստի կառուցվածքը և պատասխանների ձևաթղթի լրացման կարգը ..........................................................5
3. Առաջադրանքների կառուցվածքային տեսակները .........6
4. Առաջադրանքներում ընդգրկվող նյութը ..........................16
5. Կենտրոնացված (բանավոր) քննության պահանջները և գնահատման չափանիշները...................18
6. Պատասխանների ձևաթղթի նմուշը................................20

# ՆԱԽԱԲԱՆ

Ուղեցույցում ներկայացված է 2014 թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստերի նոր կառուցվածքը, տրված են առաջադրանքների թեմատիկ, բովանդակային և կառուցվածքային տիպերի համամասնությունը, առաջադրանքների կառուցվածքային տիպերը, դրանց լուծման եղանակների և պատասխանների ձևաթուղթը լրացնելու կարգի բացատրությունները, առաջադրանքներում ընդգրկվելիք ծրագրային նյութի շրջանակները, պատասխանների ձևաթղթի նմուշը, կենտրոնացված (բանավոր) քննության պահանջները և գնահատման չափանիշները:

Պետական ավարտական և միասնական քննության թեստերը և կենտրոնացված (բանավոր) քննության հարցաթերթիկները կազմված են ուղեցույցի համաձայն:

# ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Քննական թեստը բաղկացած է **Ա** և **Բ** մակարդակներից և ներառում է 14 առաջադրանք՝ 80 ենթաառաջադրանքով:

Ա մակարդակի առաջադրանքները վերաբերում են ավարտական քննությանը, իսկ միասնական քննությունը ներառում է **Ա** և **Բ** մակարդակները:

Թեստային առաջադրանքերն ունեն հետևյալ 2 կառուցվածքային տիպերը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ և կարճ պատասխանով առաջադրանքներ: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր: Թեստի ընդհանուր միավորը 80 է:

# ԹԵՍՏԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

| ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՏԵՍԱԿԸ | ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՊԱՀԱՆՋԸ | ԵՆԹԱԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՄԻԱՎՈՐԸ |
|---|---|---|---|
| **Ա ՄԱԿԱՐԴԱԿ** | | | |
| ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | I. Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին՝ ընտրելով ճիշտ տարբերակը: | 5 | 5 |
| | II. Ընտրել ճիշտ բայաձևը: | 12 | 12 |
| | III. Ընտրել համատեքստին համապատասխանող խոսքիմասային ձևը: | 5 | 5 |
| | IV. Ընտրել նախադասության բովանդակությանը համապատասխանող տարբերակը: | 15 | 15 |
| | V. Ընտրել ուղղակի/անուղղակի խոսքի փոխակերպման ճիշտ տարբերակը: | 5 | 5 |
| ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | VI. Տեքստում բաց են թողնված բառեր: Տեղադրել բառերը համատեքստում՝ բովանդակությանը համապատասխան (տրված բառերից երկուսն ավելորդ են): | 1 | 1 |
| | VII. Տրված հարցական նախադասություններից որո՞նք են քերականորեն ճիշտ ձևակերպված: | 5 | 5 |
| | VIII. Համապատասխանեցնել բառերը և դրանց իմաստները: | 2 | 2 |

| Բ ՄԱԿԱՐԴԱԿ | | | | |
|---|---|---|---|---|
| ԸՆՏՐՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | IX. | Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին՝ ընտրելով ճիշտ տարբերակը: | 10 | 10 |
| | X. | Ընտրել նախադասության բովանդա-կությանը համապատասխանող տարբե-րակը: | 6 | 6 |
| | XI. | Ընտրել ավելորդ բառը: | 6 | 6 |
| | XII. | Տեքստում բաց են թողնված նախադասու-թյուններ: Անհրաժեշտ է տրված նախադա-սությունները տեղադրել համատեքստում՝ բովանդակությանը համապատասխան (տրված նախադասություններից երկուսն ավելորդ են): | 1 | 1 |
| ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | XIII. | Տրված նախադասություններից որո՞նք են կրավորական սեռով ճիշտ ձևակերպված: | 4 | 4 |
| | XIV. | Համապատասխանեցնել նախադասության երկու մասերը: | 3 | 3 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 14 | | 80 | 80 |

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

*Թեստի կառուցվածքը*

*1. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ.*

**Ա մակարդակում 1-42-րդ և Բ մակարդակում 51-72-րդ ենթաառաջադրանքները ընտրովի պատասխանով առաջադրանքներ են:**

- *Կառուցվածքը:* Տրվում է պատասխանի չորս տարբերակ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

*Նմուշ.*

"Do you want to go?"

"No. Let's keep on _____________ an hour or so."

a) working

b) work

c) to work

d) the working

- *Ձևաթղթի լրացման կարգը*: Ընտրված տարբերակի համարին համապատասխան վանդակում դրվում է «X» նշանը.




- *Գնահատման չափանիշը*: Ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

*2. Կարճ պատասխանով առաջադրանքներ.*

**Ա մակարդակում 43-50-րդ և Բ մակարդակում 73-80-րդ ենթաառաջադրանքները կարճ պատասխանով առաջադրանքներ են:**

*Կառուցվածքը:* Տրվում է որևէ նյութ՝ տեքստ, նախադասություն և այլն, և տվյալ նյութի վերաբերյալ ձևակերպվում է պահանջը կամ հարցը, որի պատասխանը կարող է լինել մեկ կամ մի քանի թիվ:

*Ներկառուցվածքային տարատեսակները:*

- ***Բառերի կամ նախադասությունների տեղադրում տեքստում:***

*Ա մակարդակում* տրվում է տեքստ, որում բաց են թողնված բառեր, որոնք համարակալված են և պահանջվում է գրել բաց թողնված բառերի համարների հերթականությունը համատեքստի բովանդակությանը համապատասխան (տրված բառերից երկուսն ավելորդ են):

*Նմուշ.*

Interpreting the feelings of other people is not always easy, as we all know, and we __________as much on what they seem to be telling us, as on the actual words they say. Facial __________and tone of voice are obvious ways of showing our __________to something, and it may well be that we unconsciously __________views that we are trying to hide. Body movements in general may also indicate feelings and interviewers often __________ particular attention to the way a candidate for a job walks into the rooms and sits down.

1. pay, 2.rely, 3. express, 4. reaction, 5. expression 6. estimate,
7. exhibite

*Բ մակարդակում* տրվում է տեքստ, որում բաց են թողնված նախադասություններ: Անհրաժեշտ է տրված նախադասությունները տեղադրել համատեքստում՝ բովանդակությանը համապատասխան (տրված նախադասություններից երկուսն ավելորդ են):

*Նմուշ.*

I play the trumpet in my school jazz band. Last month we held a jazz competition with bands from local high schools – and our band won!

_________. We didn't look much like adult professional bands, but all of us were used to performing in competitions, so the quality of playing was amazing, especially considering everyone was so young. Players from each band even created new tunes right there on stage. It was exciting to watch – but even better when my band played on stage!

We have a great jazz band at my school, but not everyone who wants to play in it gets accepted – only about half, in fact. _________. There are also trips to jazz summer camps across the country – I've been to a couple and learnt a lot.

Adults are often surprised that young people are getting interested in jazz. _________. But I find it exciting because it's both new and old at the same time – you can create your own music, but you also feel you're part of its history. _________.

My school's really lucky because we have great teachers, and parents who've supported us all the way. _________.

1. Without them, we'd never get anywhere with our music!
2. But anyone who's keen to play goes to jazz practice before school, and we often spend time together after school, listening to jazz and learning its language.
3. In fact, creating music has never been an easy task; moreover, you need to combine it with history.
4. Jazz is something very old and you simply need to know it if you want to know your own history.
5. What is more, you're playing on stage in the same way as great jazz performers before you.

6. Each band had their own costumes, ranging from black school uniforms like my band wore, to brightly-coloured T-shirts.
7. History was one of the important subjects at our school.

*Ձևաթղթի լրացման կարգը:* Պատասխանը թվերի շարք է, որում թվերը պետք է դասավորել ըստ իմաստային հաջորդականության:

| 77 | 7 | 2 | 1 | 4 | 3 |
|---|---|---|---|---|---|

*Գնահատման չափանիշը:* Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր միավորների համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

- ***Համարների ընտրությամբ:***

*Ա մակարդակում* յուրաքանչյուր ենթաառաջադրանքում տրվում է 5-ական հարցական նախադասություն և պետք է ընտրել, թե դրանցից որոնք են քերականորեն ճիշտ ձևակերպված:

*Նմուշ.*

1. Max never used to eat raw fish, did he?
2. What do you think who did he want to speak to yesterday?
3. Would you stay with us and watch the performance on TV?
4. When you would like to stay with them?
5. Do you want newspapers to buy?

*Բ մակարդակում* յուրաքանչյուր ենթաառաջադրանքում տրվում է 5-ական նախադասություն և պետք է ընտրել, թե դրանցից որոնք են են կրավորական սեռով ճիշտ ձևակերպված:

*Նմուշ.*

1. Lots of people had parked their cars on the pavement.
2. The boxes haven't been packed yet.
3. It has been decided that Wednesday will be a school holiday.
4. The motorbike George rode in the race was lent to him by Tom.
5. The police have issued a description of the wanted man.

*Ձևաթղթի լրացման կարգը:* Պատասխանը կարող է լինել մեկ կամ մի քանի թիվ՝ առավելագույնը՝ 4: Թվերի **հերթականության պահպանումը պարտադիր չէ**: Տրված վանդակներից յուրաքանչյուրում պետք է գրել մեկ թիվ:



- **Համապատասխանեցմամբ**

*Ա մակարդակում* յուրաքանչյուր ենթաառաջադրանքում տրվում է 4-ական բառ և պետք է աջ սյունակում տրված ամեն բառի համար ընտրել ձախ սյունակում տրված բացատրություններից որևէ մեկը (ձախ սյունակում տրված տարբերակներից մեկն ավելորդ է):

*Նմուշ.*

| | |
|---|---|
| A) Leisure | 1) a favourable position or chance |
| B) Entertainment | 2) climbing mountains |
| C) Opportunity | 3) something that serves for amusement |
| D) Mountaineering | 4) free or unoccupied time |
| | 5) the act of seeing sights |

*Բ մակարդակում* յուրաքանչյուր ենթաառաջադրանքում տրվում է 4-ական նախադասություն և պետք է աջ սյունակում տրված ամեն նախադասության համար ընտրել ձախ սյունակում տրված շարունակություններից որևէ մեկը (ձախ սյունակում տրված տարբերակներից երկուս ավելորդ են):

| | |
|---|---|
| A. After the interruption, the speaker went on talking __________ | 1. without sightseeing and photographs. |
| B. Millions of people around the world continue to smoke _________ | 2. looking at the sights and taking photographs. |
| C. In summer a lot of tourists usually walk round the town __________. | 3. in spite of the fact that it causes cancer. |
| D. I didn’t realize what he was saying because __________ | 4. as if nothing had happened. |
| | 5. so they don’t work here any more. |
| | 6. she is very excited. |

*Զևաթղթի լրացման կարգը:* Յուրաքանչյուր տառի ներքևի վանդակում պետք է գրել տարբերակի համարը **ըստ իմաստային համապատասխանության**:




*Գնահատման չափանիշը:* Ճիշտ և լիարժեք (եթե նշված են պահանջին համապատասխանող բոլոր միավորների համարները) պատասխանի համար տրվում է մեկ միավոր, սխալ կամ թերի պատասխանի, ինչպես նաև պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում:

**Զևաթղթում սխալ նշված պատասխանները փոխելու համար** տրված է 5 հնարավորություն. 3-ը ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, 2-ը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար:
Ընտրովի պատասխանով առաջադրանքների պատասխանը փոխելու համար համապատասխան տեղերում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և սյունակի համապատասխան վանդակում դրվում է «X» նշանը:




Կարճ պատասխանով առաջադրանքի դեպքում համապա- տասխան տեղում գրվում է տվյալ առաջադրանքի համարը և լրացվում են թվերը:







*Թեստի ամբողջական նմուշը կդրվի atc.am կայքում:*

# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ՆՅՈՒԹԸ

**Բառակազմություն**

Ածանցում և բառաբարդում, անգլերենի առավել տարածված գոյականակերտ, ածականակերտ, թվականակերտ, մակբայակերտ, բայական վերջածանցներ և նախածանցներ:

**Ձևաբանություն**

Գոյական անուն. թիվ, հոլով:

Հոդ. անորոշ, որոշյալ, զրո հոդ:

Ածական անուն. ածականի համեմատության աստիճանները, կազմության առանձնահատկությունները, համեմատական կառուցվածքները:

Թվական անուն. քանակական և դասական թվականներ:

Դերանուն. անձնական, ստացական, ցուցական, անորոշ, որոշյալ, ժխտական, հարցական, հարաբերական, անդրադարձ, փոխադարձ:

Բայ. բայի հիմնական ձևերը, կանոնավոր և անկանոն բայեր, անցողական և անանցողական բայեր, լիիմաստ բայեր, օժանդակ բայեր և բայ-հանգույց:

Բայի ժամանակները (Present, Past, Future, Future in the Past) և ժամանակային խմբերը (Indefinite, Continuous, Perfect, Perfect Continuous): Ժամանակների համաձայնեցում:

Բայի եղանակը (Indicative, Imperative, Subjunctive), բայի սեռը (the Active Voice, the Passive Voice).

Բայի անդեմ ձևերը (Infinitive, Gerund, Participle I, Participle II):

Եղանակավորող բայեր. իմաստներն ու գործածությունը (can/could, may/might, must, ինչպես նաև need, to be able to, to have to, to be to, should, need, ought to):

Մակբայ. մակբայի տեսակները, համեմատության աստիճանները, կազմության առանձնահատկությունները:

Նախդիր. նախդիրների գործածությունն ըստ իմաստի:

Շաղկապ. համադասական և ստորադասական շաղկապներ:

**Շարահյուսություն**

Նախադասության տիպերն ըստ կազմության. պարզ (համառոտ և ընդարձակ) նախադասություններ, բարդ (համադասական և ստորադասական) նախադասություններ, գլխավոր և երկրորդական նախադասություններ, երկրորդական նախադասության տիպերը: Նախադասությունների դասակարգումն ըստ նպատակի (պատմողական, հարցական, ժխտական) և դրանց շարադասությունը: Նախադասության

գլխավոր և երկրորդական անդամներ: Անդեմ նախադասություններ: Հարցական նախադասությունների տիպերը (General, Special, Alternative, Disjunctive): Ենթակայի և ստորոգյալի համաձայնեցում:
Ուղղակի և անուղղակի խոսք, կազմության առանձնահատ-կությունները:

# ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ (ԲԱՆԱՎՈՐ) ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բանավոր քննության նպատակն է ստուգել դիմորդի լեզվական գիտելիքները և բանավոր հաղորդակցական հմտությունները:

Բանավոր քննության հարցատոմսը բաղկացած է 2 հարցից.

1. Կարդալ, թարգմանել և պատասխանել հարցերին:
2. Զրույց առաջադրված թեմայով:

Բանավոր քննության պահանջներն են՝

1. Կարդալ ադապտացված գեղարվեստական գրքից մի հատված ՝ դրսևորելով ընթերցանության կանոնների համապատասխան իմացություն և հնչյունաբանական գիտելիքների գործնական կիրառման հմտություններ: Գրավոր թարգմանել հատվածի նշված մասը բառարանի օգնությամբ, պատասխանել հատվածի բովանդակությանն ուղղված հարցերին:
2. Քերականորեն ճիշտ ձևակերպելով և տրամաբանորեն զարգացնելով արտահայտած մտքերը՝ զրուցել հետևյալ թեմաների շուրջ.

1. The Republic of Armenia and Its Places of Interest
2. Yerevan, the Capital City of Armenia
3. My Native Town (Village)
4. The United Kingdom of Great Britain and Northern Ireland
5. London and Major Cities of the UK
6. The United States of America
7. Washington and the Major Cities of the USA
8. My Family
9. My Flat
10. My Friend
11. My Hobby
12. My School
13. My Day
14. My Favourite Book
15. My Plans for the Future
16. My Summer and Winter Holidays

17. Seasons and Weather
18. English Weather
19. My Meals
20. English Meals
21. Shopping
22. Means of Communication
23. At the Cinema/Theater
24. Travelling
25. Sports and Games

Բանավոր քննությունը գնահատվում է հետևյալ չափանիշներով՝

1. ընթերցանություն 0-3 միավոր
2. թարգմանություն 0-5 միավոր
3. ընթերցված տեքստի ընկալում0-6 միավոր
4. բանավոր հաղորդակցում 0-6 միավոր

Բանավոր քննությունը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով:
Գնահատականի բողոքարկման դեպքում դիմորդին տրվում է 4-5 նախադասություն հայերենից անգլերեն թարգմանելու համար:

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ


2014թ. միասնական քննություն
Պատասխանների ձևաթուղթ
Անգլերեն

ազգանուն

անուն հայրանուն

անձնական համար

Եղե՛ք ուշադիր
* Լրացրե՛ք միայն սև գելային գրիչով:
* Ընտրովի պատասխանով առաջադրանքներում Ձեր ընտրած տարբերակի համարին համապատասխանող վանդակում դրե՛ք X նշանը (միևնույն սյունակի մեկից ավելի վանդակներում ցանկացած նշում կհամարվի սխալ):
* Թվերը գրե՛ք հետևյալ տեսքով՝ 1234567890

0 4

Թեստ № 1 2 3 4

Ա մակարդակ

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Պատասխանի համարը: a, b, c, d

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22

23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42

Կարճ պատասխանով առաջադրանքներ

43 44 45 46 47 48

A B C D

49 50

Բ մակարդակ

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72

Կարճ պատասխանով առաջադրանքներ

73 74 75 76 77

A B C D

78 79 80

Ա և Բ մակարդակներում սխալ նշված պատասխանները փոխելու տեղը

Ընտրովի պատասխան

Կարճ պատասխան

A B C D

Ամբողջ ձևաթղթում փոխված պատասխանների քանակը

Արտագրե՛ք այս նախադասությունը՝

Ծանոթ եմ քննության կարգին: